ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 հունիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

94
(2760)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

103 ՔԱՂԱՔԱՑՈՒՑ 80-Ը ՉԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԼՍԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հայաստանի քաղաքական դաշտի նկատմամբ անվստահությունը երկար ժամանակ է՝ բոլոր քաղաքական գործիչները նկատում ու բարձրաձայնում են: Միայն իշխանությունն է, որ պարբերաբար հանդես է գալիս հայտարարություններով, թե իրենք ժողովրդի մոտ ունեն վստահություն, իրենք ընտրված իշխանություն են, եւ Նիկոլ Փաշինյանի անվերապահ վստահությունը շարունակում է պահպանվել նաեւ այսօր:

«Ժողովուրդ» օրաթերթը փոքրիկ հարցում է անցկացրել Երեւանի կենտրոնի փողոցներում՝ պարզելու համար մի շատ հստակ հարց՝ լսում են արդյոք քաղաքացիները Նիկոլ Փաշինյանի ելույթները, թե ոչ: Հարցումն անցկացվել է 103 քաղաքացու շրջանակներում, որոնցից 80-ը կտրուկ բացասական են արձագանքում հարցին՝ նշելով, որ նույնիսկ անունը լսել չեն ուզում: Դրական է պատասխանել 14 մարդ՝ մեկնաբանելով, որ լինելով ՀՀ քաղաքացի՝ պարտավոր է ծանոթ լինել ներքաղաքական իրավիճակին: Վարչապետի ելույթները մասամբ լսում են 9 մարդ, որոնք պատճառ են բերում ժամանակ չունենալու հանգամանքը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի նախկին ռեկտոր Դավիթ Խիթարյանը, պաշտոնավարման ընթացքում ձեռք բերելով ծառայողական մեքենա, դրա համար վճարել է 2,4 միլիոն դրամ ավել գումար: Մեքենան գնելու մասին Խիթարյանը 2022 թ. հոկտեմբերի 20-ին գրառում է կատարել իր ֆեյսբուքյան էջում: Մեր ունեցած տեղեկություններով՝ այդ մեքենան 23,9 մլն ՀՀ դրամով ձեռք է բերվել Խիթարյանին մտերիմ հանդիսացող ֆիզիկական անձից, այն դեպքում, որ այդ նույն անձն այդ մեքենան ավտոսրահից գնել է մոտ 21,5 մլն ՀՀ դրամով: Ֆիզիկական անձը, որից գնվել է մեքենան, ռեկտորի ընկերն է՝ Արարատ Մարտիրոսյանը: Մեքենան 2021թվականի արտադրության է եւ գնվել է հենց 2021 թվականին, սակայն հատկանշական է, որ այդ նույն ժամանակաշրջանում նույն մեքենան՝ Toyota Fortuner-ը, ավտոսրահից կարելի էր ձեռք բերել մոտ 21 միլիոնով: Փաստացի Արարատ Մարտիրոսյանից գնված մեքենան 2,4 միլիոն դրամ ավել է, քան նույն մեքենայի նորը՝ ավտոսրահում, եւ համալսարանը այդքան գումար ավել է վճարել միայն նրա համար, որ այն գնի ռեկտորի ընկերոջից: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց մեկնաբանություն ստանալ Դավիթ Խիթարյանից՝ հետաքրքրվելով, թե կատարվածն արդյոք կոռուպցիոն սխեմա չէ, եւ թե ինչու է բուհը 2,4 մլն ՀՀ դրամ ավել վճարել իր ծառայողական մեքենայի համար: Վերջինս օրեր շարունակ նշում էր, որ տարբեր միջոցառումների է եւ չի կարող հարցերին պատասխանել: Իսկ երբ մենք գրավոր կերպով վերջինիս հայտնեցինք, որ չպատասխանելու դեպքում կիրապարակենք նյութը առանց իր մեկնաբանության, Խիթարյանը պատասխանեց, որ բազմիցս անդրադարձել է այդ հարցին, եւ եթե լիներ կոռուպցիոն ռիսկ, ինքն իր ֆեյսբուքյան էջում դրա վերաբերյալ հրապարակում չէր անի: Կարճ ասած, մեղադրանքը չի ընդունում:



Չնայած անվտանգային պայթյունավտանգ իրավիճակին՝ հայկական երկու պետությունների՝ Հայաստանի եւ Արցախի իշխանական վերնախավերին այդպես էլ չի հաջողվում ներքին տարաձայնությունները մի կողմ դնել ու գոնե այս իրավիճակում մեկ բռունցք դառնալ: Այն, որ Հայաստանի եւ Արցախի իշխանությունների ջրերը վաղուց մի հունով չեն գնում, ակնհայտ է. որքան էլ հրապարակային հայտարարություններով փորձում են սիրաշահել իրար, բայց ներքին տարաձայնությունները թաքցնել չի լինում: «Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝ այս ընթացքում Հայաստանի իշխանություններն առհասարակ կապը կտրել են Արցախի իշխանությունների հետ, անգամ չեն տեղեկացնում՝ ինչ են բանակցում Վաշինգտոնում կամ Մոսկվայում: Հայաստանի իշխանություններն անհասկանալի պատճառներով ամեն կերպ փորձում են խուսափել Արցախի իշխանությունների հետ շփումներից: Ավելին՝ մեր տեղեկություններով՝ անգամ Արայիկ Հարությունյանի համար է մեծ խնդիր դարձել Նիկոլ Փաշինյանի հետ կապ հաստատելը: «Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ՝ պարզելու՝ որն է պատճառը, որ Հայաստանի եւ Արցախի իշխանությունների միջեւ կապը կտրվել է: «Ճիշտն ասած, ես չգիտեմ, պետք է հարցնեք նրանց, ովքեր բանակցություններ են վարում, բայց կարծում եմ, որ, անկախ ամեն ինչից, մեր դիրքորոշումը պարզ է, եւ կապ չունեն անհատները, կապ ունեն ընդհանուր մոտեցումները, իսկ Արցախի մոտեցումը չի փոխվել. Արցախը չի լինելու Ադրբեջանի կազմում»,-արձագանքեց նա: Բաբայանից հետաքրքրվեցինք նաեւ՝ Հայաստանի իշխանությունները տեղյակ պահում են արդյոք Արցախի իշխանություններին բանակցությունների արդյունքների մասին, տեղյակ են իրենք՝ ինչ են բանակցում Վաշինգտոնում կամ Մոսկվայում:«Հուսով եմ, քանի որ, անկախ ամեն ինչից, մեր դիրքորոշումը պարզ է, մենք դա բացեիբաց ենք արտահայտում»,- ասաց նա: Թեմայի առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանություն է վերցրել նաեւ վարչապետի մամուլի նորանշանակ քարտուղար Նազելի Բաղդասարյանից: «Ընդամենը մեկ-երկու օր առաջ համահայկական նիստ է տեղի ունեցել, տեսել եք հաղորդակցման եւ շփման ինտենսիվությունը, տեսել եք նաեւ Արցախի նախագահի հրապարակային հայտարարությունները Հայաստանի գործող իշխանությունների եւ վարչապետի մասին. ավել մեկնաբանություն չունեմ»,- ասաց վարչապետի մամուլի քարտուղարը:

Պետական վերահսկողական ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանն ունի երկու բնակարան եւ մեկ հողամաս: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ Պետրոսյանը հանդիսանում է 2014 թվականին Կոտայքի մարզի Ակունք գյուղում գնված հողամասի միակ սեփականատերը: Երեւանի Արաբկիր վարչական շրջանում եւ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում գտնվող անշարժ գույքերի պարագայում նա համասեփականատեր է կնոջ՝ Արմինե Պետրոսյանի հետ: Ռոմանոս Պետրոսյանը, պարզվում է, մեքենա չունի: Ուսումնասիրելով նրա դրամական միջոցները, պարզ է դառնում, որ Պետական վերահսկողական ծառայության ղեկավարը 2022 թվականի սկզբում իր բանկային հաշիվներին ունեցել է 3 մլն 60 հազար դրամ, որը տարվա վերջին դարձել է 8 մլն 605 հազար դրամ, իսկ, ահա, նրա կանխիկ գումարը 5 մլն-ից տարեվերջին դարձել է 3 մլն: Սա՝ այն դեպքում, երբ մեկ տարում Պետրոսյանը 21 մլն դրամից ավելի եկամուտ է ունեցել, որից 19 մլն դրամը նրա աշխատավարձն է, իսկ մյուս մասն էլ նա ստացել է Պետական եկամուտների կոմիտեից: Ռոմանոս Պետրոսյանը նաեւ վարկ ունի, եւ տարեվերջին մայր գումարի մնացորդը 24 մլն դրամ է եղել, իսկ մեկ տարվա ընթացքում այդ վարկի մարման համար նա ծախսել է 2 մլն 581 հազար դրամ: Ըստ հայտարարագրի՝ նա հանդիսանում է «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ կառավարման խորհրդի նախագահը: Նրա կինն էլ աշխատում է այս քոլեջում եւ 2 մլն դրամ աշխատավարձ է ստացել: Ավելին՝ վերջինս 2021 թվականին 2007 թվականի արտադրության Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենա է գնել:

ԶՐՈՒՅՑ

ԽԱԺԱԿՅԱՆԸ՝ ՔՊ-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը Երեւանի ավագանու «Լույս» խմբակցության անդամ, «Լուսավոր Հայաստան» կուսակցության խաղաբաղեսի թեկնածու Դավիթ Խաժակյանն է:

-Պարոն Խաժակյան, Դուք որոշ ժամանակ առաջ մեզ հետ զրույցում չէիք բացառել, որ ավագանու առաջիկա ընտրություններին հնարավոր է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ դաշինքով գնաք ընտրություններին, ասել էիք, որ քննարկումներ է գնում նրանց հետ:

Երեկ ՔՊ-ն հայտարարեց, որ առանձին են մասնակցելու ընտրություններին՝ առանց դաշինքի. սպասելի՞ էր Ձեզ համար այս որոշումը, թե՞ անակնկալ էր Ձեզ համար:

-Քննարկումների տրամաբանության մեջ երկու տարբերակն էլ հնարավոր էր. իրենք քննարկել են եւ իրենց որոշումը կայացրել են, այդտեղ ես մեկնաբանելու բան չունեմ, իրենց որոշումն է: Ես ԼՀԿ-ի ցուցակը գլխավորող թեկնածուն եմ, այս ընթացքում եղել են եւ շարունակվում են բազմաթիվ քննարկումներ տարբեր անհատների, քաղաքական ուժերի հետ: Այդ խոսակցություններն իմ մասով շարունակվելու են: ՔՊ-ն որոշել է մասնակցել առանձին ցուցակով, ես, բնականաբար, իրենց հաջողություն եմ մաղթում:

-Պարոն Խաժակյան, ամեն դեպքում, Դուք հայտարարում եք, որ քննարկումներ են գնում ՔՊ-ի հետ՝ դաշինքով մասնակցելու մասով, բայց հիմա, ստացվում է, նրանք մերժում են ձեզ:

-Ես ասել եմ, որ ՔՊ-ի հետ դաշինքով մասնակցելու հարցը քննարկում ենք, հավանական համարում եմ դա, ես ասել եմ, որ չեմ բացառում դաշինքով ՔՊ-ի հետ մասնակցելը, բայց եթե նրանք որոշում են կայացրել առանձին կուսակցությունով մասնակցել, հետեւաբար նրանց հետ դաշինքը բացառվում է, ուստի այդ թեման եկեք համարենք փակված: Մնացյալի մասով կան հնարավորություններ, չկան փակված թեմաներ, կորոշվի առաջիկա 1-2 շաբաթվա ընթացքում:

-Այս պահին կա՞ն քաղաքական ուժեր, որոնց հետ դաշինքով մասնակցելու վերաբերյալ բանակցություններ եք տանում, թե՞ «Լուսավոր Հայաստան»-ն էլ առանձին կմասնակցի ընտրություններին:

-Ինչպես մեր նախորդ խոսակցության ժամանակ եմ ասել, կան ուժեր, որոնց հետ բացառել եմ դաշինքը, բայց մյուս ուժերի հետ չեմ բացառել: Ֆորմատի հետ կապված քննարկումները շարունակվում են:

-Կոնկրետ ո՞ր ուժերի հետ եք բանակցում այս պահին:

-Կան քննարկումներ առաձին անհատների հետ, որոնց մասով առաջիկայում կունենանք հստակություն: Չեմ բացառում որեւէ ֆորմատ, ես համարում եմ, որ քաղաքային ընտրություններում քաղաքի հետ կապ ունեցող մարդիկ պետք է հնարավորինս կոնսոլիդացված գնան ընտրություններին: Այդ կոնսոլիդացիայի հետ կապված ես իմ աշխատանքը տանում եմ, բայց եթե դա չստացվի կամ մասնակի ստացվի, ամեն դեպքում, մեր մասնակցությունը մնում է ուժի մեջ:

-Պարոն Խաժակյան, մի շարք ուժեր արդեն հստակ հայտարարել են, որ մասնակցելու են ավագանու ընտրություններին, իրենց թեկնածուներին են ներկայացրել. ո՞ւմ եք համարում ձեր հիմնական մրցակիցը:

-Ես ամբողջ դաշտում բոլորին էլ համարում եմ մրցակից: Քանի որ քաղաքային ընտրությունների մեջ առաջնային բաղադրիչը քաղաքին հուզող հարցերն են, յուրաքանչյուրն ունի իր առաջարկը, այդ առաջարկները որպես գաղափար մրցելու են, այդ պատճառով էլ բոլորին մրցակից եմ համարում: Մենք պայքարելու ենք մեր քաղաքացիների վստահությանն արժանանալու համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

«ՀԱՅԱՔՎԵԻ» ԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐՎԵՑ

Երեւանի քաղաքապետարանը պաշտոնապես պատասխանել է «Հայաքվե» նախաձեռնության ներկայացուցիչ Արամ Պետրոսյանի դիմումին եւ տեղեկացրել, որ ՀՀ Ազգային Ժողովին «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով ստորագրահավաք իրականացնելու համար բոլոր վարչական շրջանների նստավայրերում նախաձեռնությանը տարածք հատկացնելու վերաբերյալ դիմումը բավարարվել է:

Ստորագրահավաքի ընթացքին կմասնակցեն մեկական հանրային ծառայող ամեն վարչական շրջանից:

Ավելի վաղ հայտնել էինք, որ «Հայաքվե» նախաձեռնությունը հանդես է գալիս օրենսդրությունը փոխելու առաջարկությամբ՝ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումից հրաժարվելու եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնելու համար խիստ պատիժ նախատեսելու համար: Դրանով ծանր պատիժ է նախատեսվում Հայաստանի Հանրապետության անունից Արցախն Ադրբեջանի մաս ճանաչող եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնող գործողությունների համար:

Նախաձեռնողները հիմք են ընդունում ՀՀ անկախության հռչակագիրը, ՀՀ Սահմանադրությունը եւ ՀՀ գերագույն խորհրդի՝ 1992թ. հուլիսի 8-ի որոշումը:

ԿԸՀ-ի կողմից դրական պատասխանից հետո սահմանվում է 60-օրյա ժամկետ՝ 2023 թվականի հունիսի 21-ից օգոստոսի 19-ը, քվեարկություն-ստորագրահավաքը կազմակերպելու համար (50 հազար ստորագրություն):

Դրանից հետո կդիմեն ԿԸՀ, որտեղ կհաստատվի ստորագրությունների վավերականությունը, հետո կդիմեն արդեն Ազգային ժողով:

ԷՐԴՈՂԱՆԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՓԱՇԻՆՅԱՆԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

Վարչապետը շնորհավորել է նախագահին Կուրբան Բայրամի առթիվ, իսկ նախագահը շնորհավորել է վարչապետին գալիք Վարդավառի՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի առթիվ:

Ղեկավարները քննարկել են իրենց երկրների միջեւ երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացը: Այս համատեքստում քննարկվել է դիվանագիտական անձնագրեր ունեցողների եւ երրորդ երկրների քաղաքացիների համար ցամաքային սահմանի բացման մասին պայմանավորվածության կատարման ընթացքը:

ԱՐՑԱԽԻ ՊԲ-Ն ՀԵՐՔՈՒՄ Է

Համացանցի որոշ օգտատերեր շրջանառում են ստահոդ տեղեկություններ այն մասին, թե, իբր, հունիսի 28-ին ադրբեջանական սադրանքի հետեւանքով վիրավորում են ստացել պաշտպանության բանակի 8 զինծառայողներ:

Արցախի ՊԲ-ից հայտնում են. «Եվս մեկ անգամ հորդորում ենք ստահոդ եւ կեղծ լուրեր չշրջանառել, դիտավորությամբ ապատեղեկատվություն չտարածել:

Հունիսի 28-ին ադրբեջանական սադրանքի հետեւանքով զոհվել են ՊԲ 4 զինծառայողներ, վիրավորում ստացած զինծառայողներ չկան»:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՐԱՄԱՆՈՎ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունիսի 28-ին որոշում է ստորագրել Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնավարման վերաբերյալ: Որոշման մեջ ասվում է. «Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 17-րդ հոդվածի 4-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի՝2011 թվականի ապրիլի 4-ի «Ս. Խլղաթյանին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար նշանակելու մասին» N 281-Ա որոշման վերնագրում եւ տեքստում «մարզպետարանի աշխատակազմի ղեկավար» բառերը փոխարինել «մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սեւակ Խլղաթյանի պաշտոնավարման ժամկետը երկարաձգել մինչեւ 2024 թվականի հուլիսի 30-ը»:

ՈՒՇԱԳՐԱՎ ՈՐՈՇՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ուշագրավ որոշում է կայացրել ՀՀ-ում լիազորությունները դադարեցված 7 դատավորների մասով:

Մասնավորապես, լիազորությունները դադարեցրած 7 դատավորները՝ Ալեքսեյ Սոքոյանը, Զարուհի Նախշքարյանը, Աննա Փիլոսյանը, Սուրեն Անտոնյանը եւ այլք, դիմել են ՄԻԵԴ, որը դատավորների գանգատը ընդունել է վարույթ. ուշագրավն այն է, որ բոլոր դատավորների գործերը միացվել ու քննվելու են մեկ վարույթում: ՄԻԵԴ-ի այս որոշումը աննախադեպ է այն առումով, որ, ըստ էության, Եվրոպական դատարանը հասկացել է, որ կա խախտում, եւ առաջնահերթության սկզբունքով է քննելու լիազորությունները դադարեցրած դատավորների գործը: Սա ենթադրել է տալիս՝ նոր «ապտակ» է սպասվում Բարձրագույն դատական խորհրդին: Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ ՄԻԵԴ-ը դատավորների դիմումը վարույթ ընդունելու եւ առաջնահերթությամբ 7 դատավորների հարցը մեկ վարույթում քննելու մասին անգամ տեղեկացրել է ԲԴԽ-ին: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ՝ տեղեկությունը պարզելու համար, սակայն ի պատասխան՝ ԲԴԽ-ից հայտնեցին. «Մենք որեւէ բան ՄԻԵԴ-ից չենք ստացել եւ որեւէ գործառույթ չունենք նման հարցերը իրենց հետ քննարկելու»:

Զարմանալի է, բայց ԲԴԽ-ն ակնհայտ ստում է, քանի որ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում կա փաստաթուղթ, թե ինչպես է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը ՄԻԵԴ որոշման մասին գրություն ուղարկել եւ՛ ԲԴԽ նախագահ Անդրեասյանին, եւ՛ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին՝ ըստ էության պահանջելով բացատրություններ:

«ԵՎՐՈՊՈԼ»-Ի ՏՆՕՐԵՆԸ՝ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության («Եվրոպոլ») գործադիր տնօրեն Քեթրին դը Բոլի գլխավորած պատվիրակությունը այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ ՀՀ ՆԳ նախարար Վահե Ղազարյանի եւ Նիդերլանդների Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Բալայանի ուղեկցությամբ:

Այս մասին տեղեկացնում են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից:

Հյուրերին դիմավորել եւ հուշահամալիրի ստեղծման պատմությունը ներկայացրել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի թանգարանային աշխատանքների գծով փոխտնօրեն Լուսինե Աբրահամյանը: Նա անդրադարձ է կատարել նաեւ Ծիծեռնակաբերդի տարածքում անցյալ դարավերջին Ադրբեջանի Սումգայիթ, Կիրովաբադ (Գանձակ), Բաքու քաղաքներում ադրբեջանական կառավարության կազմակերպած կոտորածներին զոհ գնացած հայերի հիշատակին տեղադրված երեք խաչքարերի եւ Արցախյան գոյամարտի տարիներին Հուշապատի դիմացի հատվածում հուղարկավորված հինգ ազատամարտիկների պատմություններին՝ շեշտելով կապը տեղի ունեցածի եւ Հայոց ցեղասպանության միջեւ:

Քեթրին դը Բոլը եւ Վահե Ղազարյանը ծաղկեպսակներ են դրել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին, այնուհետեւ հյուրերը ծաղիկներ են դրել անմար կրակի մոտ եւ մեկ րոպե լռությամբ հարգել Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

Հյուրերը շրջել են նաեւ Հայոց ցեղասպանության թանգարանում, որտեղ ՀՑԹԻ թանգարանային աշխատանքների գծով փոխտնօրեն Լուսինե Աբրահամյանի ուղեկցությամբ ծանոթացել են մշտական եւ ժամանակավոր ցուցադրություններին, որից հետո տիկին Քեթրին դը Բոլը գրառում է կատարել Պատվավոր հյուրերի հուշամատյանում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այսօր Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը հայտարարություն տարածեց, որ հունիսի 28-ին՝ ժամը 01:30-ից, Ադրբեջանի ՉՈՒ սնորաբաժանումները հրետանային միջոցներից կրակ են բացել Մարտունու եւ Մարտակերտի հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաեւ ԱԹՍ-ներ:

Հայկական կողմն ունի 4 զոհ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Արցախի Ազգային ժողովի պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց, որ այս պահին բնակիչների մոտ խուճապային տրամադրություն չկա:

«Ինչպես միշտ, այսպիսի իրավիճակներում Արցախը թաղվում է լռության մեջ: Համատարած լռություն է, որովհետեւ մենք հերթական ցավն ենք գրանցում, որի հաղթահարումը արդեն անհնարին է դարձել: Ունենք 4 զոհ, եւ այս ամենն այլեւս հնարավոր չի ընկալել, մանավանդ երբ Հայաստանի իշխանությունները հենց հիմա իրենց խաղաղության օրակարգի շուրջ շարունակում են բանակցել:

Երբեք չեն կարող իմանալ՝ երբ կլինի հաջորդ կրակոցը, բայց մոտ մեկ ժամ առաջ խոսել եմ բնակիչների հետ, ասում էին՝ հանդարտ է, բայց ամեն վայրկյան կարող է իրավիճակը փոխվել:

Այն իրավիճակը, որում մենք հիմա գտնվում ենք, մեզ համար սարսափելի է. մենք այլեւս չենք դիմանում, երբ զոհվում են մեր երիտասարդները, մեր քաջերը: Բայց նաեւ հասկանում ենք, որ այն իշխանությունները, որ մենք ունենք, եւ, հատկապես, Հայաստանի Հանրապետության իշխանությունները, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում՝ Արցախից վերջնական հետք չմնա, բնականաբար սա կանխատեսելի էր: Այնպես չէ, որ մենք սպասում էինք, որ այդ թղթի կտորի վրա հերթական ստորագրությունը դնելուց հետո բոլորն ապրելու են խաղաղ եւ երջանիկ»:

Հարցին, թե այս պահին արտգործնախարարների հանդիպումն է նաեւ, սա որեւէ բան կարող է փոխել, Հակոբյանը պատասխանեց. «Չեմ կարծում, քանի որ այն օրակարգը, որով հանդիպումները տեղի են ունենում, չգիտես՝ խնդալու, թե լացելու բան է: Հայաստանը եւ Արցախը ներկայացնողը գնացել խոսում է խաղաղությունից մի կողմի հետ, որը սպանում է իրենց: Որեւէ բան չի կարելի սպասել այդ օրակարգով շփման արդյունքում: Եթե Ազգային շահի գիտակցություն ունեցող իշխանություն լիներ, հենց հիմա պիտի դադարեցնեին այդ բանակցությունները եւ վերադառնային:

Երբ դեկտեմբերին պետք է տեղի ունենար արտգործնախարարների եռակողմ հանդիպումը, Արարատ Միրզոյանը չներկայացավ՝ պատճառաբանելով Արցախի շրջափակումը եւ հումանիտար խնդիրները, որոնք իրենք պետք է լուծեին: Բայց արտաքին գործերի նախարարը այդ ժամանակ ընդամենը մի գործ ուներ անելու՝ օգտագործել այդ հարթակը եւ փորձել ինչ-որ կերպ հաջողության հասնել: Իսկ հիմա, երբ մենք ունենք 4 զոհ, իրենք միգուցե կշարունակեն խաղաղության օրակարգի շուրջ բանակցել, որոնք միայն մահ են բերում»:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԺ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՈՒՄ

Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը հուլիսի 4-9-ը կգործուղվի Վրաստան: ՀՀ ԱԺ պատվիրակությունը Թբիլիսիում կմասնակցի Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի լիագումար նստաշրջանի աշխատանքներին:

Պատվիրակության կազմում կլինեն ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Սոնա Ղազարյանը, ինչպես նաեւ պատվիրակության համաքարտուղար եւ Ազգային ժողովի աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջխորհրդարանական կապերի եւ եվրաինտեգրման բաժնի առաջատար մասնագետ Ժաննա Հարությունյանը:

Պատվիրակության գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը կկատարվի պետբյուջեի հաշվին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ԱՐՎԵԼ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մասյացոտնի թեմի հոգեւոր սպասավոր Տ. Սեդրակ քահանա Աղասյանը:

Մայր Աթոռից հայտնում են, որ տնօրինության համար հիմք է ծառայել Մասյացոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի միջնորդությունը եւ Կարգապահական Հանձնախմբի եզրակացությունը Տեր Սեդրակ քահանայի կանոնազանց ընթացքի վերաբերյալ:

Կարգալույծ եկեղեցականը դասվում է աշխարհականների շարքին՝ Հրանտ Աղասյան ավազանի անունով:

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Փոխվարչապետ Միհր Գրիգորյանն ընդունել է ԱՄՆ պետդեպարտամենտի Միջազգային անվտանգության եւ զենքի չտարածման բյուրոյի Միջուկային էներգիայի առեւտրային մրցունակության գծով ավագ խորհրդական Ջասթին Ֆրիդմանի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քրիստինա Քվինը: Այս մասին հայտնում է Կառավարության մամուլի ծառայությունը:

«Փոխվարչապետը, ողջունելով հյուրերին, ներկայացրել է Հայաստանում էներգետիկայի ոլորտում առկա հիմնական մարտահրավերները, անդրադարձել տարածաշրջանային էներգետիկ ծրագրերում Հայաստանի մասնակցության կարեւորության հարցին: Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցության հնարավոր ուղղությունները: Մտքեր են փոխանակվել նաեւ մարդկային կապիտալի զարգացման, թվայնացման եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտներում առկա գլոբալ միտումների եւ Հայաստանում այդ ոլորտներում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ»,- նշվում է հաղորդագրության մեջ:

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ՏԱՐԶԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դատախազը 2023 թվականի հունվարի 12-ին հանրային իրավական հետապնդում է հարուցել Տարզան մականվամբ հայտնի Ա.Խ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով շորթում) եւ 325-րդ հոդվածի 1-ին մասով (իրավական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ իրավական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը):

Դատախազությունից հայտնում են, որ նախաքննության տվյալների համաձայն՝ Ա.Խ.-ն 2022 թվականին ստեղծել է քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորում: Միավորման նպատակն է հանցագործություն կատարելն ու դրան հովանավորելը, այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ Ա.Խ.-ն, համաձայնություն է տվել իր հեղինակությունն օգտագործելու միջոցով լուծել իրեն դիմած Մ.Հ.-ի եւ Ա.Հ.-ի միջեւ եղած գումարային վեճը:

Մասնավորապես, Ա.Խ.-ն 2022 թվականի հոկտեմբերի 17-ից քրեական ենթամշակույթ կրող խմբավորման՝ ինքնությունները չպարզված 5-6 անձանց ուղեկցությամբ հանդիպումներ է ունեցել Ա.Հ.-ի հետ, որի ժամանակ, օգտագործելով իր քրեական հեղինակությունը, Ա.Հ.-ի եւ նրա մերձավոր ազգականների նկատմամբ բռնություն գործադրելու, ինչպես նաեւ վերջիններիս գույքը վերցնելու սպառնալիքների միջոցով ասել է, որ Մ.Հ.-ի հետ ունեցած պարտքերն ինքն է լուծելու, որը, իր հաշվարկով, կազմում է 314 հազար ԱՄՆ դոլար, եւ որը պետք է վճարի Ա.Հ.-ն:

Այնուհետեւ պահանջել է իրեն տալ եկամուտ եւ մասնաբաժին Ա.Հ.-ի գազալցակայանների շահույթներից: Այդ ամենն ուղեկցվել է Ա.Հ.-ի մերձավոր ազգականների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքներով:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում Մ.Հ.-ին մեղադրանք է ներկայացվել Քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա դիմել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման ղեկավար, Տարզան մականվամբ Ա.Խ.-ին՝ իր անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով Ա.Հ.-ի հետ ունեցած գումարային վեճը լուծելու խնդրանքով:

2023 թվականի հունիսի 28-ին հսկող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ քրեական վարույթի նյութերի հետ հանձնել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՊԱՏՐՈՆ ԴԱՎՈՅԻՆ

Երեկ տեղի ունեցավ Գրիգորի Խաչատուրովի գործով նիստը:

Հիշեցնենք՝ փետրվարի 21-ին Գրիգորի Խաչատուրովի նկատմամբ հանրային քրեական հետապնդում էր հարուցվել պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքն օրինականացնելու (փողերի լվացման) համար: Նա ձերբակալվել էր: Դատախազությունը միջնորդություն էր ներկայացրել նրան կալանավորելու համար, սակայն Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Տիգրան Դավթյանը մերժել էր միջնորդությունը: Խաչատուրովը նույն օրը դատարանի դահլիճից ազատ էր արձակվել:

Փետրվարի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունը հատուկ վերանայման բողոք էր ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան Գրիգորի Խաչատուրովի նկատմամբ խափանման միջոց կալանքի միջնորդությունը մերժելու որոշման դեմ: Մարտի 16-ին Վերաքննիչ դատարանը դատախազության բողոքը քննելուց հետո Գրիգորի Խաչատուրովին կալանավորելու որոշում էր կայացրել:

Սույն գործով մեղադրանք է առաջադրվել նաեւ 3-րդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովի ընկերոջը՝ Էդգար Արշակյանին:

Արշակյանի պաշտպան Միհրան Պողոսյանն ասել էր, որ քրեական գործում առկա 18 միլիոն դրամի գրավ վերցնելու մասը նույնպես իրականությանը չի համապատասխանում. «Գլխավոր դատախազն Ազգային ժողովում ուղղակի զբաղված էր մանիպուլյացիաներով, որովհետեւ տվյալ գույքի համար երբեւիցե 18 միլիոն դրամ գումար չի վերցվել: 2016-ի օգոստոսի 12-ին Խաչատուրովը ձեռք է բերել բնակարան Վանաձորում, այդ ժամանակ կքնվել է հիփոթեքային պայմանագիր, որի պայմաններում միայն այդ բնակարանը գրավադրելու համար Խաչատուրովին տրամադրվել է 18 միլիոն 484 հազար դրամի վարկային գիծ: Որոշ ժամանակ անց բանկը Խաչատուրովին խնդրել է ներկայացնել լրացուցիչ գրավ, նա էլ իր ընկերոջը՝ Էդգար Արշակյանին, խնդրել է լրացուցիչ գումարով օգնել. քանի որ Արշակյանն այդ տարածքը չի օգտագործել, որպես լրացուցիչ գրավ դա դրվել է բանկում, սակայն վարկային գիծը ոչ մի դրամով չի ավելացել», - նշել է պաշտպանը:

Փաստաբանը շեշտեց, որ Էդգար Արշակյանին մեղսագրվում է մի արարք, որն օբյեկտիվ իրականությունում գոյություն չունի. «Ասում են՝ Գրիգոր Խաչատուրովն է իրականում այդ տարածքը ձեռք բերել, որի համար որեւէ փաստական հիմք չկա, եւ Էդգար Արշակյանը հանդիսացել է, այսպես ասած, քողարկված անձ՝ Խաչատուրովի գործարքը թաքցնելու համար»: Ի դեպ, այս գործով մեղադրյալներ են Դավիթ Գալստյանը,ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանը, գործարար Դավիթ Գալստյանը, որի խափանման միջոցի հարցն էլ քննվում է այս պահին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ՈՐՊԵՍ «ՄԱՀԱԿ Է ՊԱՀՈՒՄ»

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդու՝ Աշոտ Փաշինյանի ենթադրաբար առեւանգման գործով նախաքննական մարմինը վերցրել է 44-օրյա պատերազմի հերոս Մխիթար Գալեյանի հոր՝ Գարիկ Գալեյանի մեքենան ու մեկ ամիս այն չի տրամադրել Գալեյաններին: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հունիսի 23-ին մեքենան ի պահ են հանձնել Գալեյաններին: Այսինքն՝ նրանք մեքենա չեն կարող վաճառել մինչեւ քրեական գործի ավարտը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդու՝ Աշոտ Փաշինյանի ենթադրաբար առեւանգման գործը ուղարկվել է դատարան, եւ մեղադրյալի աթոռին է հայտնվել 44-օրյա պատերազմի հերոսի մայրը՝ Գայանե Հակոբյանը, որն ազատազրկման դատապարտվեց եւ պայմանական ազատ արձակվեց:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ վարչապետի որդու գործով մաս կա անջատված, որով քննությունը ՀՀ քննչական կոմիտեում դեռեւս շարունակվում է: Մեզ հայտնի դարձավ, որ անջատված մասը վերաբերում է մայիսի 17-ին՝ Աշոտ Փաշինյանի ենթադրյալ առեւանգման դեպքի օրը դատարանի բակում մյուս զինվորների ծնողների, մասնավորապես՝ Աստղիկ եւ Գարիկ Գալեյանների, Վահիկ Սահակյանի եւ մյուս ծնողների գործողություններին, թե նրանք ինչ են արել, երբ Աշոտ Փաշինյանին տեսել են Գայանե Հակոբյանի մեքենան նստելիս:

Ստացվում է, որ նախաքննական մարմինը, այս քրեական գործով քննությունը շարունակելով, այն որպես «մահակ է պահում» զոհված զինվորների ծնողների գլխին՝ հասկացնելով՝ եթե սխալ բան անեն, ապա Գայանե Հակոբյանի նման կհայտնվեն բանտերում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՈԿԱՅԻՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ

Ամբողջ աշխարհում այժմ ռեկորդային թվով մարդիկ կոկաին են օգտագործում, ինչի մասին ասվում է Միավորված ազգերի կազմակերպության զեկույցում:

Թմրամիջոցների եւ հանցավորության դեմ պայքարի գործակալության գնահատականների համաձայն՝ ավելի քան 22 միլիոն մարդ առնվազն մեկ անգամ օգտագործել է կոկաին 2021 թվականին: Բացի այդ, չորրորդ տարին անընդմեջ արձանագրվում է կոկաինի օգտագործման ծավալի ավելացում. գրում է Daily Mail-ը:

Ընդհանուր առմամբ, ըստ ՄԱԿ-ի զեկույցի՝ 2021 թվականին 296 միլիոն մարդ թմրանյութ է օգտագործել, ինչը 23 տոկոսով ավելի է, քան մեկ տասնամյակ առաջ:

Նշվում է, որ ամբողջ աշխարհում նկատվում է կոկաինի առաջարկի եւ պահանջարկի «նկատելի աճ»:

Զեկույցում ասվում է, որ կոկաինի շուկայի մեծ մասը գտնվում է Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաներում, առաջատար արտադրողները Կոլումբիան, Պերուն եւ Բոլիվիան են: Վերջին ժամանակահատվածում մեծ շուկաներ են դարձել Արեւմտյան եւ Կենտրոնական Եվրոպան, Ավստրալիան եւս:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿԻՍՎՈՒՄ Է

Հունիսի 26-ին կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը Տավուշի մարզպետարանում հանդիպում է ունեցել Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Տավուշի մարզպետարանի պաշտոնյաներ: Մարզպետարանից հայտնում են, որ քննարկման հիմնական հարցերը վերաբերել են 2023 թվականի հունվարից ուժի մեջ մտած «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին եւ սեպտեմբերից բոլոր դպրոցներում փորձարկվող հանրակրթության նոր չափորոշչին: Այդ նոր չափորոշիչը նախորդ երկու տարում արդեն փորձարկվել է Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում, իսկ նոր ուսումնական տարվանից ներդրվելու է մյուս մարզերի եւ Երեւան քաղաքի բոլոր դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 10-րդ դասարաններում: Նախարարի տեղակալը հայտնել է նաեւ, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր համակարգով՝ դպրոցների կառավարման բովանդակային եւ վարչական գործառույթները տարանջատված են: Կրթության որակի ապահովման գործառույթն ամբողջովին վերապահվում է տնօրենին, իսկ տնտեսական կառավարումը՝ վարչական համակարգողին: Վարչական կառավարման մեջ ներառվում են հաշվապահությունը, գնումների գործընթացը, սննդի եւ մաքրության կազմակերպումը, անվտանգության ապահովումը, ընթացիկ տեխնիկական սպասարկումը: Տավուշի մարզի դպրոցների տնօրենները լարված դեմքերով են լսել այն լուրը, որ այսուհետ դպրոցների տնտեսական կառավարումն իրականացնելու են ոչ թե իրենք, այլ դպրոցի վարչական համակարգողը: Սա դուր չի եկել հանրակրթական դպրոցների տնօրեններին, որոնք սովոր են տնօրինել իրենց դպրոցի ֆինանսական, նյութական ռեսուրսները:

6 ԺԱՄԻՑ ԱՎԵԼ՝ ԱՌԱՆՑ ՀՈՍԱՆՔԻ

Նոյեմբերյան քաղաքը եւ Նոյեմբերյան համայնքի բոլոր 18 գյուղերը հունիսի 27-ի ժամը 14:00-ից մինչեւ նույն օրը՝ժամը 19:45, հոսանքազրկված էին: Դրա պատճառը Լոռու մարզու Ալավերդի համայնքում՝ Թեղուտի հանքավայրի մոտ տեղացած ուժեղ կարկուտն ու քամին, քամուց 110 հազար վոլտ լարման էլեկտրական հոսանքի հենասյան տապալումն էր: Այդ բարձրավոլտ գծից են սնուցվում Նոյեմբերյան համայնքի բոլոր 19 բնակավայրերը: Էլեկտրամատակարարումը վերականգնելու համար բարձրավոլտ գծի նորոգման աշխատանքներ կատարվեցին: Նոյեմբերյան համայնքի առեւտրի օբյեկտների տերերը մտավախություն ունեին, որ 6 ժամ հոսանքազրկման հետեւանքով իրենց խանութների սառնարաններում պահվող պաղպաղակի ողջ քանակը կարող է հալվել, փչանալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԱՐԵԼԻՑ

ՓԱՐԻԶՈՒՄ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՇՆՈՐՀԱԼՈՒ

Հունիսի 27-ին Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, կայացել է «Ներսես Շնորհալի. հրեշտակ երկնավոր» խորագիրը կրող գիտաժողովը, որով մեկնարկել են Ներսես Շնորհալու 850-րդ տարելիցին նվիրված միջոցառումները: Նույն օրը տեղի է ունեցել նաեւ նույնանուն խորագրով ցուցադրության բացումը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների 2022-2023 թվականների օրացույցում ընդգրկված հայ միջնադարյան հայտնի մտածող Ներսես Շնորհալու հիշատակի միջոցառումներին մասնակցում է նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունը:

«Ներսես Շնորհալի. հրեշտակ երկնավոր» խորագիրը կրող գիտաժողովին մասնակցել են Մատենադարանի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի, Ֆրանսիայի գիտական շրջանակների ներկայացուցիչները, ՅՈՒՆԵՍԿՕ-ում Վատիկանի ներկայացուցիչը, քույր եկեղեցիների հոգեւոր հայրեր, ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավատարմագրված դեսպաններ, հրավիրված հյուրեր:

Գիտաժողովին ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավար Քրիստիան Տեր Ստեփանյանը եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ում Վատիկանի ներկայացուցիչը:

Գիտաժողովի հիմնական զեկուցողներն էին ֆրանսիացի անվանի հայագետ Ժան Պիեր Մահեն, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող Գուրգեն Գասպարյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հայր Շահե աբեղա Անանյանը: Գիտաժողովը վարել է Մատենադարանի ավագ գիտաշխատող Արմինե Մելքոնյանը:

Ելույթի ընթացքում բանախոսներն արժեւորել են Շնորհալու ստեղծագործական ժառանգությունը, նրա դերակատարությունը համաքրիստոնեական արժեքների տարածման գործում:

Գիտաժողովին հաջորդել է նույնանուն խորագրով ցուցադրությունը, որի բացմանը ելույթով հանդես է եկել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Ողջունելով ներկաներին՝ Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է մշակութային կարեւոր եւ աննախադեպ իրադարձության կապակցությամբ. «Այսօր մենք առիթ ունենք վերստին նշանավորելու հայոց հոգեւոր պատմության ամենաերեւելի անուներից մեկին՝ Սուրբ Ներսես Շնորհալուն: Վստահ եմ՝ այսօր մեկնարկած գիտաժողովի շրջանակում տրվել են ստույգ գիտական գնահատականներ, գեղեցիկ եւ խորիմաստ բնութագրումներ, եւ, այդուհանդերձ, դժվար է սահմանել այն դերն ու նշանակությունը, որ ունեցել է մեծանուն Հայրապետը հայ աստվածաբանական ու գեղագիտական մտքի ձեւավորման մեջ»:

Նախարարի նշմամբ՝ ցուցահանդեսը եւս մեկ հնարավորություն է ծանոթանալու Ներսես Շնորհալու ժառանգությանը եւ գիտակցելու նրա դերը մատենագրության, գրավոր մշակույթի պատմության մեջ:

«Նմուշների բնագրերը պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, եւ առիթից օգտվելով՝ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Մաշտոցյան Մատենադարանին պատկերազարդ ձեռագրերի թվային պատճենները տրամադրելու համար»,- ասել է նախարարը՝ շնորհակալություն հայտնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությանը նման հնարավորություն ստեղծելու համար:

Ելույթներ են ունեցել նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավար Քրիստիան Տեր Ստեփանյանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Էդուարդ Ֆիրմին Մատոկոն:

Ցուցադրությունը ներկայացրել է ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի գլխավոր ավանդապահի ժամանակավոր պարտականությունները կատարող Դավիթ Ղազարյանը:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԳՆԱՑՔԻ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԿՓՈԽՎԻ

Երեւան-Սեւան-Շորժա-Երեւան մերձքաղաքային էլեկտրագնացքը կշարժվի ոչ թե «Ալմաստ» կանգառից (Քանաքեռ-Զեյթուն համայնք), այլ «Երեւան» (Սասունցի Դավթի հրապարակին հարող) կայարանից: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, մամուլի ասուլիսի ժամանակ այս մասին ասել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մելնիկովը:

«Այս տարի ունենք նոր երթուղի. էլեկտրագնացքը «Երեւան» կայարանից շարժվելու է «Շորժա» կայարան: Նախորդ տարիներին երթուղին մեկնարկում էր «Ալմաստ» կայարանից, բայց քանի որ մեր ուղեւորները շատ հարցումներ էին ուղարկել մեզ, որոշեցինք երթուղին սկսել Երեւանի կենտրոնին ավելի մոտ»,- ասել է Մելնիկովը:

Նշվում է, որ երթուղին սկսել է աշխատել հունիսի 16-ից:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՕԳՆԱԿԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը 2022 թվականի հայտարարատու տարում հայտարարագրել է մեկ բնակարան Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում: Ըստ հայտարարագրի՝ ունի մեկ մարդատար մեքենա՝ 2015 թվականի արտադրության Hyundai մակնիշի, որը ձեռք է բերել 2021 թվականին:

ԱԺ նախագահի Ալեն Սիմոնյանի նախկին օգնական, ՔՊ-ական Հասմիկ Հակոբյանը հայտարարգրել է 33 մլն 100 հազար դրամ արժողությամբ փոխառություն «Արմ Կոնստրակտ» ՍՊԸ-ից: Հակոբյանի կանխիկ դրամական միջոցները տարեվերջին կազմել են 500 հազար դրամ, իսկ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 835 հազար դրամ:

Հայտարարատու անձի եկամուտները տարվա ընթացքում կազմել են 37 մլն 712 հազար դրամ, որից 8 մլն 022 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից, իսկ 29 մլն 690 հազար դրամը վարկ է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 41 մլն 714 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի գլխավորած պատվիրակությունը այցելել է համահայկական ամառային 8-րդ խաղերի մայրաքաղաք Գյումրի:

ՀԽՀԿ նախագահն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել Շիրակի մարզպետարանում, որին մասնակցել են մարզպետ Մուշեղ Մուրադյանը, Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները, ուժային կառույցների պատասխանատուները:

Ի. Զաքարյանը ներկայացրել է համահայկական ամառային 8-րդ խաղերի՝ մինչեւ այս պահը կատարված աշխատանքների ընթացքը եւ տվել համապատասխան հանձնարարականներ՝ Գյումրիում կայանալիք բացման արարողության կազմակերպչական աշխատանքների հետ կապված:

Անդրադառնալով արդեն մեկնարկած աշխատանքների ընթացքին՝ կոմիտեի նախագահը նշել է, որ օր օրի ավելանում է խաղերին մասնակցելու ցանկություն հայտնած երկրների ու մարզիկների թիվը: Հայտերի ընդունման վերջնաժամկետը հուլիսի 15-ն է, որից հետո տեղի կունենա վիճակահանություն: Այս պահի տվյալներով՝ ամենամեծ պատվիրակությունը կժամանի Ռուսաստանի Դաշնությունից՝ 18 քաղաքից շուրջ 430 մասնակից, այնուհետեւ՝ Թուրքիայից՝ 5 քաղաքից՝ 374 մասնակից, Վրաստանից՝ 7 քաղաքից՝ 301 մասնակից, 247 մասնակից 10 քաղաքից կժամանի ԱՄՆ-ից, 180 մասնակից էլ հայտագրվել է Ֆրանսիայից, պատվիրակություններ կլինեն Արգենտինայից, Ավստրալիայից, Լիբանանից, Եգիպտոսից՝ Հայաստանի մասնակիցների հետ ընդհանուր մինչ այժմ գրանցված մարզիկների թիվը հասնում է 5500-ի: Առաջիկա օրերին կձեւավորվի մարզային շտաբ, որն համակարգելու է խաղերի բացման արարողության կազմակերպչական աշխատանքները: Հանդիպման ընթացքում քննարկվել են խաղերի անցկացմանն ու մասնակիցների կեցությանն առնչվող կազմակերպչական մի շարք հարցեր, մասնավորապես՝ քաղաքի արտաքին ձեւավորմանը, առավել բանուկ հատվածներում էկրաններ տեղադրելուն, կապի, արագ սննդի, անվտանգ տեղաշարժի ապահովմանը, ինչպես նաեւ բոլոր մարզադահլիճներում եւ կեցության վայրերում ոստիկանական հսկողության ուժեղացմանը, արտակարգ իրավիճակների եւ շտապօգնության ծառայությունների աշխատանքին առնչվող հարցեր: Շիրակի մարզպետը, կարեւորելով Համահայկական խաղերի նշանակությունը մարզի մարզամշակութային կյանքի աշխուժացման գործում, ընդգծել է, որ կարվի ամեն հնարավորը բարձր մակարդակով դրանք անցկացնելու համար:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (1)

Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

-Վայոց ձորի մարզ, համայնք Ջերմուկ, Ջերմուկ ք., Մյասնիկյան փողոց, 18 շենք, 5 հասցեում գտնվող 110,45 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 28230000 ՀՀ դրամ:

- Վայոց ձորի մարզ, համայնք Ջերմուկ, Ջերմուկ ք., Զախափնյակ թաղամաս, 27բ շենք, 3 հասցեում գտնվող 78,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17400000 ՀՀ դրամ:

- Վայոց ձորի մարզ, համայնք Ջերմուկ, Ջերմուկ ք., Զախափնյակ թաղամասի 4-րդ փողոց, 12 հասցեում գտնվող 24,9 ք.մ. խանութ եւ 0,003997 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝6820000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Վ.Մամիկոնյան փողոց, 10 հասցեում գտնվող 269,3 ք.մ. /346,4 ք.մ. արտաքին մակերեսով/ բնակելի տուն եւ 0,0773 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21200000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի ք., Սայաթ-Նովայի փողոց, 10 շենք, 8 հասցեում գտնվող 68,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9400000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., 2-րդ թաղամաս, 4 շենք, 6 հասցեում գտնվող 79,47 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝6130000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Վարդ-Բաղ, 3-րդ թաղամաս, 1-ին միկրոշրջան, 6 շենք, 19 հասցեում գտնվող 77,04 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝11770000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Ս. Կասյան փողոց, 21/1 հասցեում գտնվող 165,22 ք.մ. բնակելի տուն, 28,01 ք.մ. նկուղ, 34,5 ք.մ. խանութ, 3,2 ք.մ. շինություն, 15,86 ք.մ. սանհանգույց, 81,75 ք.մ. ծածկ, 2,4 ք.մ./ 5,28 խ.մ./ պարիսպ եւ 0,09576 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝31700000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Շահումյան փողոց, 69 շենք, 2 հասցեում գտնվող 61,32 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝10070000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Արարատյան 1-ին զանգված, 6 շենք, 40 հասցեում գտնվող 55,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22470000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Ն. Շենգավիթ, 11-րդ փողոց, 39/1 շենք, 47 հասցեում գտնվող 47,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝22300000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Մեղրի, Մեղրի ք., Գործարանային փողոց, 23 հասցեում գտնվող 199,3 ք.մ. բնակելի տուն, 7,3 ք.մ. մառան, 3,4 ք.մ. բաղնիք, 6,4 ք.մ. ծածկ, 8,4 ք.մ. ծածկ եւ 0,14 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝10600000 ՀՀ դրամ:

-Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., Մադաթյան փողոց, 2 շենք, 4 հասցեում գտնվող 98,88 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝8530000 ՀՀ դրամ:

-Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Պառոշյան, Անդրանիկի փողոց, 6 շենք, 6 հասցեում գտնվող 79,87 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24400000 ՀՀ դրամ:

-Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., Բարեկամության փողոց, 7-րդ շենք, 41 հասցեում գտնվող 71,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16800000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., 8-րդ փողոց, 88 հասցեում գտնվող 87,7 ք.մ. բնակելի տուն, 27,2 ք.մ. ավտոտնակ, 7,3 ք.մ. խոհանոց, 7,9 ք.մ. լողարան, 35,2 ք.մ. ծածկ եւ 0,0967 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝22980000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Կ. Ուլնեցու փողոց, 3-րդ փակուղի, 4 շենք, 28 հասցեում գտնվող 73,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 41900000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք?, Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 83 շենք, 19 հասցեում գտնվող 34,68 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 4590000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 8-րդ թաղամաս, 5 շենք, 18 հասցեում գտնվող 74,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14600000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 4-րդ թաղամաս, 11 շենք, 41 հասցեում գտնվող 67 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16070000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 6-րդ թաղամաս, 23 շենք, 5 հասցեում գտնվող 21,4 ք.մ. ոչ բնակելի տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 8500000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, Եղվարդ ք., Երեւանյան փողոց, 2 շենք, 35 հասցեում գտնվող 75,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19400000 ՀՀ դրամ:

- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Ն. Ստեփանյան փողոց, 60 հասցեում գտնվող 257,1 ք.մ. բնակելի տուն, 94,5 ք.մ. անասնաշենք, 11 ք.մ. կաթսայատուն եւ 0,107 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝24220000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Բաղրամյան փողոց, 21/1 շենք, 48 հասցեում գտնվող 62,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11860000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Սայաթ-Նովայի փողոց, 101 հասցեում գտնվող 68,8 ք.մ. բնակելի տուն, 11 ք.մ. մառան, 4,8 ք.մ. կաթսայատուն, 4,7 ք.մ. լողարան եւ 0,0282 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝6200000 ՀՀ դրամ:

-Տավուշի մարզ, համայնք Իջեւան, Իջեւան ք., Անկախության փողոց, 2 շենք, 8 հասցեում գտնվող 71,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17340000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, քաղաք Նոյեմբերյան, 26 Կոմիսարների փողոց, 3/1 հասցեում գտնվող 353.86 ք.մ. բնակելի տուն, 80.7 ք.մ. ավտոտնակ, 49.5 ք.մ. անասնաշենք, 8.91 ք.մ. սանհանգույց եւ 0.246 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝31840000 ՀՀ դրամ:

-Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Շահումյան փողոց, 37 շենք, 40 հասցեում գտնվող 47,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 5980000 ՀՀ դրամ:

-Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Կասյան փողոց, 26/11շ-5 հասցեում գտնվող 79,98 ք.մ. շինություն եւ 0,00436 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 24500000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Էրեբունի, Էրեբունու փողոց, 37 շենք, 45 հասցեում գտնվող 46,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24380000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 2 շենք, 45 հասցեում գտնվող 53,83 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22100000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 27 շենք, 35 հասցեում գտնվող 56,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝13650000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 52/2 շենք, 20 հասցեում գտնվող 54,18 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝28600000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Կենտրոն, Այգեստան 4-րդ փողոց, 6 հասցեում գտնվող 182,6 ք.մ. բնակելի տուն եւ 0,04195 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 88740000 ՀՀ դրամ

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 11.08.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ (2)

Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

-Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գյուղ Այգեկ, 12-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող 689,7 ք.մ. արտադրամաս, 23 ք.մ. սան հանգույց, 78,6 ք.մ. կաթսայատուն, 2559 ք.մ. ջերմոց, 2413,6 ք.մ. ջերմոց, 18,4 ք.մ. պահակատուն, 135,2 ք.մ. /351,5 խ.մ. / պարիսպ եւ 2,2787 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 240000000 ՀՀ դրամ:

-Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գյուղ Այգեկ, 12-րդ փողոց, 3 հասցեում գտնվող 132,7 ք.մ. պահեստ եւ 0,02 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14400000 ՀՀ դրամ:

-ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ծովակալ Իսակովի պողոտա, 25/26 հասցեում գտնվող 983,8 ք.մ. շինություն եւ 0,073294 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝156000000 ՀՀ դրամ:

-Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գյուղ Փարաքար, Մայրաքաղաքային փողոց, 127 հասցեում գտնվող 1481,3 քմ հասարակական, սննդի, սպասարկման եւ ժամանցի կենտրոն եւ 0,075 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 440000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով եւ, այնուհետեւ, յուրաքանչյուր աշխատանքային օր: Դասական փուլերում չվաճառված գույքը, բանկի հանձնարարականով, սակարկվում է հոլանդական եղանակով՝ մեկնարկային գների 10%-ի իջեցումով յուրաքանչյուր հաջորդ փուլին, բայց ոչ պակաս պատվիրատուի կողմից ներկայացված վերջնական հատման գնից: Աճուրդի ավարտը՝29.12.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՄՐՑՈՒՅԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՄԵԼՅԵՆ

Հայաստանում առաջին անգամ անցկացվեց սոմելյեների մրցույթ, որի արդյունքում Մարիամ Սաղաթելյանը ճանաչվեց Հայաստանի 2023 թ.-ի լավագույն սոմելյեն: Մարիամը In Vino գինիների մասնագիտացված խանութի եւ «Տափաստան»-ի համահիմնադիրն է, ավելի քան տասը տարի ոլորտում է:

«Մրցույթը բավական լավ էր կազմակերպված՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Թեսթը բավական բարդ էր, քանի որ մենք մրցում էինք ոչ միայն մեր հարեւան երկրների հետ, այլեւ միջազգային ստանդարտներով: Նման մրցույթներ մեզ շատ էին պետք, ու ուրախ եմ, որ առիթ ստեղծվեց առաջինին մասնակցելու»,-նշեց հաղթողը:

Գիտելիքներն անընդհատ թարմացնելով միայն կարող ես առաջ գնալ՝ կարծում է Մարիամը: Պատմական պահ ու պատմական իրադարձություն, որը կխարթի հայաստանյան սոմելյեների ուղին միջազգային հարթակներում: Ինչպե՞ս գրագետ մատուցել գինին, ներկայացնել այն, կռահել դրա պատմությունը մեկ ումպից ու պատմել դրա մասին. ահա թե ինչ է ենթադրում սոմելյեների մասնագիտությունը, որը, սակայն, միայն վերջին տարիներին է հիմնովին ուսումնասիրվում Հայաստանում՝ Հայաստանի սոմելյեների եւ փորձագետների ասոցիացիայի հիմնադրմամբ, որի ջանքերով էլ Երեւանում՝ «Ալեքսանդր» հյուրանոցում, առաջին անգամ իրականացվեց այսպիսի մրցույթ: Ռուսաստանի սոմելյերների եւ փորձագետների միության ղեկավար, Ռուսաստանի եւ Հայաստանի գինեգործական ուղեցույցների հեղինակ Արթուր Սարգսյանը ոլորտում է արդեն 24 տարուց ավելի: 2015-2016 թթ.-ին նա սկսեց ուսումնասիրել հայաստանյան գինեգործությունը եւ հասկացավ՝ Հայաստանում ավելի քան 6000 տարվա պատմություն ունեցող այս արվեստը զարգացման եւ աշխարհին լավագույնս ներկայանալու կարիք ունի: 2017թ.-ին Սարգսյանը ձեռնամուխ եղավ Հայաստանի սոմելյեների եւ փորձագետների ասոցիացիայի հիմնադրմանը:

«Ցավոք սրտի, սոմելյեի կրթությունը Հայաստանում բացակայում է. կան, իհարկե, մարդիկ, որոնք հետաքրքրված են դրանով, բայց ոչ ավելին: Այդ էր պատճառը, որ որոշեցինք ստեղծել պրոֆեսիոնալ մի հարթակ, որտեղ կուսուցանվեին սպասարկման անձակազմի բոլոր հմտությունները, որպեսզի հայկական եւ ներմուծվող գինիները գեղեցիկ ներկայացվեին: Սոմելյեի մասնագիտությունը Հայաստանում արդեն զարգացման փուլում է, եւ կարեւոր է, որ ունենանք լավ մասնագետներ, որոնք կկարողանան գինեգործի աշխատանքի մասին ճիշտ տեղեկություն փոխանցել»,- խոսելով մրցույթի կարեւորության մասին՝ շեշտեց Սարգսյանը:

«Կարող եմ ասել, որ այսօրվա բոլոր մասնակիցներն էլ պրոֆեսիոնալներ են, որովհետեւ չեն վախենում մրցակցել, ցուցադրել, թե ինչ գիտեն ու ինչ են կարողանում: Այսօրվա հաղթանակը պատմական իրողություն է, քանի որ Հայաստանի պատմության մեջ սա սոմելյեների առաջին պրոֆեսոնալ մրցույթն էր, որով էլ Հայաստանն առաջիկայում մուտք կգործի միջազգային ասոցիացիա»,-ասաց նա: Սոմելյեների առաջին հայկական մրցույթն անցավ երկու օրում: Առաջին օրվա արդյունքով ընտրվեցին 8 մասնակիցներ, որոնցից տարբեր փորձությունների արդյունքում որոշվեցին 3 ֆինալիստները: Հաղթողի թեկնածուներին գնահատեցին ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից հրավիրված պրոֆեսիոնալները: Հայաստանի սոմելյեների եւ փորձագետների ասոցիացիայի տնօրեն Լուիզա Մաթեւոսյանի խոսքով՝ միջոցառումն այսուհետ կրելու է ամենամյա բնույթ:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ԼԻՍԻՑՅԱՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ ԿԼԻՆԻ

Հայ էթնոպարագիտության հիմնադիր Սրբուհի Լիսիցյանի 130-ամյակի կապակցությամբ հայտարարվել է Լիսիցյանական շաբաթ, որի ընթացքում կիրականացվեն մի շարք միջոցառումներ:

Շաբաթը մեկնարկել է Լիսիցյանի ծննդյան օրը՝ հունիսի 27-ին, Ազատության հրապարակում: Հունիսի 28-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ «Ծովակ» ավանդական երգի-պարի խմբի Bon quart խորագրով մենահամերգը:

Հունիսի 29-ին «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնի (ԳԱԿ) հատուկ միջոցառումների սրահում կկայանա «Հայոց պարի խազագիրը» բանախոսությունը, իսկ հունիսի 30-ին «Գաֆէսճեան» քանդակների պարտեզում կկայանա «Մեր պարերը եւ մենք» խորագրով հայկական պարի բաց դաս: Հուլիսի 2-ին Հայաստանի պատմության թանգարանում կանցկացվի «Պարահեն ինքնություն» բաց դաս-դասախոսությունը: Հայտնի ազգագրագետ, հասարակական գործիչ, պատմաբան, աշխարհագրագետ, բանասեր, մանկավարժ, թարգմանիչ, հրատարակիչ, պրոֆեսոր, գիտությունների վաստակավոր գործիչ Ստեփան Լիսիցյանի դուստրը հիմք դրեց ողջ հայկական պարարվեստի գիտականությանը՝ ուսումնասիրելով պարերը, ապա բացելով պարային ստուդիաներ Թիֆլիսում, Մոսկվայում եւ Հայաստանում: Հայաստանում պարի առաջին ստուդիայի (որը հետագայում վերածվեց Պարարվեստի ուսումնարանի) հիմնադիրը 1930-ականներից սկսեց գրառել հայկական ավանդական պարերն ու ստեղծեց պարերի գրառման այնպիսի (Запись телодвижения - Кинемография, Москва, 1940 г.) մի համակարգ, որպիսին մինչ օրս չի ստեղծվել հետխորհրդային տարածաշրջանում, եւ թերեւս անգերազանցելի է աշխարհում թե՛ իր կիրառման պարզությամբ, մատչելիությամբ, թե՛ գրառման ընդգրկունությամբ: Գրառել է երկու հազարին մոտ հայ ավանդական պարանմուշներ եւ սկիզբ դրել հայ էթնոպարագիտական դպրոցի եւ հայոց պարահավաքչությանը: Լիսիցյանական շաբաթվա նախաձեռնողներն են «Կարին» կրթամշակութային ՀԿ-ն եւ Ազգային երգ ու պարի ակադեմիան (ԱԵՊԱ)՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հետ համագործակցությամբ:

ԱՇԽԱՐՀ

ԿՀԵՌԱՆԱ՞ «ԲԱՎԱՐԻԱՅԻՑ»

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» սենեգալցի հարձակվող Սադիո Մանեի շահերը ներկայացնող ֆուտբոլային գործակալ Բակարի Սիսեն հերքել է լուրերը, թե գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած թիմը հաջորդ ամիս վաճառքի կհանի 31-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերը:

«Սաուդյան Արաբիայից առաջարկների մասին չեմ լսել: Ոչ մի կասկած չկա, որ Սադիո Մանեն մնում է «Բավարիայում»: Նրա դեռ երկու տարի ունի պայմանագրով: Նա դեռ այստեղ է»,- Սիսեի խոսքը մեջբերում է Bayern & Germany-ն: Մանեն անցած ամռանն է «Լիվերպուլից» տեղափոխվել «Բավարիա» 32 միլիոն եվրոյի դիմաց:

Մանեն մյունխենյան թիմի հետ մասնակցել է 38 հանդիպման, խփել 12 գոլ, կատարել 6 գոլային փոխանցում:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ «ԻՆՏԵՐ»-Ի ՀԵՏ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր «Ինտերը» երկարաժամկետ պայմանագիր է կնքել Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Մարկուս Տյուրամի հետ. հաղորդում է gianlucadimarzio.com-ը: 25-ամյա ֆուտբոլիստը կստանա տարեկան 6-6,5 միլիոն եվրո: Հունիսի 30-ին կավարտվի Մարկուս Տյուրամի պայմանագիրը գերմանական «Բորուսիա Մյոնխենգլադբախի» հետ: Նա ազատ գործակալի կարգավիճակում անվճար կմիանա միլանյան ակումբին: Տյուրամի տրանսֆերային արժեքը գնահատվում է 32 միլիոն եվրո: Ավարտված ակումբային մրցաշրջանում Տյուրամը մասնակցել է 32 հանդիպման, խփել 16 գոլ, կատարել 7 գոլային փոխանցում:

ԱՐՁԱՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՇԱԿԻՐԱՅԻ

Շակիրան հասել է լեգենդար կարգավիճակի, քանի որ նրա Pies Descalzos հիմնադրամն օգնել է շատ մարդկանց իր բարեգործական գործունեության միջոցով: Այդ կապակցությամբ Բարանկիլիա քաղաքի քաղաքապետ Խայմե Պումարեխոն հայտարարել է, որ Շակիրայի արձանը շուտով կտեղադրվի այն քաղաքում, որտեղ նա ծնվել է: Քաղաքապետի խոսքով՝ այս հուշարձանի տեղադրման վայրի ընտրությունը կիրականացնեն քաղաքացիները քվեարկության միջոցով: «Հարցը, որը մենք տալիս ենք Բարանկիլլայի բնակիչներին, այն է, թե որտեղ են նրանք ցանկանում տեսնել այդ արձանը, որտեղ կցանկանային, որ մենք այն տեղադրենք, եւ դրանով իսկ իրենց մասնակցությունն ունենան, ու մեծ սեր արտահայտենք այդ արտիստուհու հանդեպ»:

«Մենք պատրաստվում ենք հարգանքի տուրք մատուցել Շակիրային: Մի քանի ամսից մենք կբացենք նրա արձանը, որպեսզի Բարանկիլյայի բնակիչները հպարտանան մշակութային այս տեսարժան վայրով, ինչպես նաեւ այցելուները գան «ուխտագնացության», լուսանկարվեն եւ ներդրումներ կատարեն մեր գեղեցիկ քաղաքում»,- ասել է նա: Շակիրայի քանդակը կունենա 20 ոտնաչափ բարձրություն եւ պատրաստված կլինի բրոնզից:

● *Հունիսի 30-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Դեկամերոն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Մարդու իրավունքների պաշտպանը ի՞նչ տեսակի բողոքներ է քննում:

Աշոտ Հովհաննիսյան (58 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտպանը բողոքի առկայության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ քննարկում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների եւ ազատությունների խախտումները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պաշտպանը նաեւ քննարկում է հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների եւ ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ ծառայություններ է իր մեջ ներառում VIP ծառայությունը օդանավակայանում:

Արթուր Դերեմնեզյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ»-ի կոմերցիոն VIP ծառայությունը ներառում է՝

1. առանձնացված հաշվառման ծառայություն,
2. հավելյալ ուղեբեռի փոխադրման ծառայություն (VIP սրահից դեպի VIP ավտոկանգառ եւ հակառակ ուղղությամբ),
3. Ժամանման սպասասրահներում (ստերիլ գոտի) թեյի մատուցում (անսահմանափակ քանակությամբ):

«Զվարթնոց»» օդանավակայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծառայությունը նաեւ ներառում է ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային մեկ խմիչք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Իսպանիայում ընթացող հունահռոմեական ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնության 63 կգ քաշային կարգայինների մրցապայքարում ՀՀ հավաքական թիմի կազմում հանդես եկած Գյումրի համայնքի Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մարզադպրոցի սան Յուրիկ Հովեյանը (անձնական մարզիչ՝ Սարիկ Սարգսյան) դարձել է ոսկե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Գիշեր	Ցերեկ
Շիրակ	+10 +14	+21 +25
Կոտայքի լեռներ	+10 +13	+19 +23
Կոտայքի նախալեռներ	+16 +18	+27 +30
Գեղարքունիք	+10 +14	+19 +24
Լոռի	+11 +16	+17 +21
Տավուշ	+16 +20	+19 +22
Արագածոտնի լեռներ	+9 +13	+19 +22
Արագածոտնի նախալեռներ	+15 +18	+27 +31

Մարզ	Գիշեր	Ցերեկ
Արարատ	+19 +22	+32 +34
Արմավիր	+17 +20	+31 +33
Վայոց ձորի լեռներ	+10 +13	+20 +23
Վայոց ձորի նախալեռներ	+18 +21	+31 +34
Սյունիքի հովիտներ	+19 +24	+30 +33
Սյունիքի նախալեռներ	+13 +17	+22 +24
Արցախ	+18 +21	+30 +33
Երեւան	+18 +20	+31 +33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*